

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1**

2013թ. սեպտեմբերի 28-ին տեղի ունեցավ Գավառի պետական համալսարանի գիտխորհրդի նիստ: Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 35 անդամներից 27-ը:

Օրակարգ`

1.ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի 2012-2013 ուստարվա գործունեության հաշվետվությունը և 2013-2014 ուստարվա զարգացման հայեցակարգը:

/զեկ՝ ԲՆՖ դեկան Մ.Ավագյան /

2.ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և ընդհանուր գրականության ամբիոնների` միացման ձևով վերակազմավորման ու հայոց լեզվի և գրականության ամբիոն ստեղծելու մասին:

/զեկ՝ ԲՖ դեկանի ժ/պ Թ. Ասոյան /

3.ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի << Ֆինանսների ու ձեռնարկությունների տնտեսագիտություն>> և <<Կառավարում>> ամբիոնների` միացման ձևով վերակազմավորման ու <<Կառավարում և ֆինանսներ>> ամբիոն ստեղծելու մասին:

/զեկ՝ ՏՖ դեկան Ս. Ամիրխանյան /

4.ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի օտար լեզուների ամբիոնի վարիչի ընտրություն:

5.Ընթացիկ հարցեր:

ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի 2012-2013 ուստարվա գործունեության հաշվետվությունը ներկայացրեց ֆակուլտետի դեկան Մ.Ավագյանը: Նա ասաց, որ ուսումնական գործընթացն իրականացվել է ըստ որոշված ժամանակացույցի, կատարվել են զարգացման հայեցակարգով նախատեսված աշխատանքները: Նա ֆակուլտետում կատարված աշխատանքները ներկայացրեց ըստ ոլորտների: Ուսումնական գործընթացը, ուսանողների առաջադիմության հետ կապված հարցերը ներկայացվեցին կիսամյակների համեմատական վերլուծության միջոցով: Ուշադրություն դարձվեց ամփոփիչ ատեստավորման քննություններին, ուսանողների ցուցաբերած գիտելիքների որակին, կրթության արդյունավետության բարձրացման ուղղությամբ ձեռնարկված միջոցներին: Որոշակի ձեռքբերումներ կան գիտահետազոտական ուսումնասիրությունների ոլորտում, որտեղ ներգրավված են նաև մագիստրատուրայի ուսանողները: Կազմակերպվել և անցկացվել են բազմաբնույթ միջոցառումներ, որոնք կոչված են նպաստելու ուսանողների առողջ բարոյահոգեբանական որակների

զարգացմանը: 2013-2014 ուստարվա զարգացման հայեցակարգով նախատեսվում է ակտիվացնել աշխատանքները, վերացնել նկատված թերությունները:

Օրակարգի 2-րդ և 3-րդ հարցերը վերաբերում էին տնտեսագիտական և բանասիրական ֆակուլտետներում նոր ամբիոնների ձևավորմանը: Նշված հարցերը ներկայացրին բանասիրական ֆակուլտետի դեկանի ժամանակավոր պաշտոնակատար Թ.Ասոյանը և տնտեսագիտական ֆակուլտետի դեկան Ս.Ամիրխանյանը: Վերջիններս, հաշվի անելով որոշ հանգամանքներ /ուսանողական համակազմի նվազում, ֆինանսական հոսքերի պակասում, ամբիոնների ուղղվածությունների մերձակցություն և այլն/, նպատակահարմար համարեցին և առաջարկեցին բանասիրական ֆակուլտետում հայոց լեզվի և ընդհանուր գրականության ամբիոնների միավորմամբ վերակազմավորել մեկ՝ հայոց լեզվի և գրականության ամբիոն, իսկ տնտեսագիտական ֆակուլտետում ստեղծել կառավարման և ֆինանսների ամբիոն՝ միավորելով <<Ֆինանսների և ձեռնարկությունների տնտեսագիտություն>> և <<Կառավարում>> ամբիոնները:

Օրակարգի 4-րդ հարցը վերաբերում էր բանասիրական ֆակուլտետի օտար լեզուների ամբիոնի վարիչի ընտրությանը, որը կազմակերպվել և անցկացվում էր ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգին համապատասխան: Ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար մրցույթին ներկայացվել էր մեկ դիմում Գ.Բդեյանի կողմից: Ստեղծվեց հաշվիչ հանձնաժողով. նախագահ՝ Հ. Ղաջոյան, անդամներ՝ Ս.Ամիրխանյան, Թ.Ասոյան: Անցկացվեց փակ /գաղտնի/ քվեարկություն, որի արդյունքները ներկայացրեց Հ.Ղաջոյանը. կողմ՝ 27, դեմ՝ 0, անվավեր՝ 0:

ԳՊՀ ընթացիկ հարցերին անդրադարձան Ռ.Հակոբյանը, Ն.Կուտուզյանը:

Հիմք ընդունելով զեկուցումները և քվեարկության արդյունքները՝

Որոշեցին՝

1.Ս.Ավագյանի հաշվետվությունն ընդունել ի գիտություն. Կատարված աշխատանքները գնահատել բավարար:

2.Բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և ընդհանուր գրականության ամբիոնների հիմքի վրա ստեղծել մեկ՝ հայոց լեզվի և գրականության ամբիոն:

3.Տնտեսագիտական ֆակուլտետի ֆինանսների ու ձեռնարկությունների տնտեսագիտության և կառավարման ամբիոնների հիմքի վրա ցտեղծել մեկ՝ կառավարման և ֆինանսների ամբիոն:

4.Հաստատել բանասիրական ֆակուլտետի օտար լեզուների ամբիոնի վարիչի թափուր տեղի համար մրցույթի քվեարկության արդյունքները:

Գիտխորհրդի նախագահ՝

Ռ. Խ. Հակոբյան

Գիտքարտուղար՝

Թ. Ա. Ասոյան